

**Հարց** Գերիշխող դիրքի չարաշահման դեպքում տուգանքի ի՞նչ չափ կարող է սահմանվել:

**Պատասխան** Գերիշխող դիրքի չարաշահումն առաջացնում է տուգանքի նշանակում՝ տնտեսավարող սուբյեկտի՝ իրավախախտման նախորդ տարվա հասույթի երկու տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան երեք հարյուր միլիոն դրամ: Նախորդ տարում 12 ամսից պակաս գործունեություն իրականացրած լինելու դեպքում, սույն մասով նախատեսված իրավախախտումն առաջացնում է տուգանքի նշանակում՝ տնտեսավարող սուբյեկտի՝ իրավախախտմանը նախորդող, բայց ոչ ավելի, քան 12 ամսվա գործունեության ժամանակահատվածի հասույթի երկու տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան երեք հարյուր միլիոն դրամ: